



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » ապրիլի 2019 թվականի N 9/9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով, 25-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 16/4 որոշման 2-րդ մասի 15-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասը լրացնել նոր կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության ֆինանսատնտեսական գործունեություն՝ վարկային և դրամաշնորհային ծրագրերի մասով	8-րդ վարչություն
	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության ֆինանսատնտեսական գործունեություն՝ բացառությամբ վարկային և դրամաշնորհային ծրագրերի	8-րդ վարչություն

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱԿ

Լ. ՅՈՒՅԱՆ

Լ. ՅՈՒՅԱՆ